

կաթիլները կա՛մ ձեռքով և կամ հազուստովը, անմիջապէս ուրիշ կաթիլներ զօրեղ կերպով կը բղխին: Հասարակ ժողովուրդը կ'ըսէ թէ՛ երբ մեր Տէրը չարչարեցին դատարանին մէջ, այս սիւները կ'ունենային հրաշալի տամկուլթիւն մը որ արցունքն է Յիսուսի անմեղութեան վրայ (P. T. S. հատ. VIII. Բ. մասն, էջ 349):

4. — Ժողովրդային աւանդութիւն մը. — Ուղեգիրները կը ծանօթագրեն թէ, ըստ ժողովրդային զրոյցներու, այս եկեղեցիին հիւսիսային պատին վըրայ, աջակողման սեղանին մօտ, նախապէս կար բացուածք մը, ուրկէ յստակ կերպով իրր թէ դժոխքէն կը լսուէին պատիժի ենթարկուած տառապող հոգիներու հառաչանաց և աղաղակներու ձայները, բայց յետոյ այդ բացուածքը գոցուած է (Han. W. էջ 103-3, նաև P. T. S. VI. հատ. էջ 7): Այս զրոյցին մէկ տարբերակ կը թուի Գեթսեմանիի Առաքելոց այրէն մինչև լեռը երկարող ստորերկրեայ ուղիէն լսուած դժոխոց ձայնը՝ զոր տեղացիք պատմած են Արգուլֆ եպիսկոպոսին և զոր համիմաստ տողերով կը յիշատակեն Գրիգոր վրդ. Տաթևացիին իր «Հարցմանց» գրքին մէջ (էջ 504) (Հ. Վ. Ե. էջ 343) և Կարապետ վրդ. Երուսաղիմացի իր յիշատակարանին մէջ (ԺԴ. դար):

Ը. ՆԱԽԱՏԱՆԱՅ ՍԻՒՆ ԿԱՍ ՓՈՒՇ ՊՍԱԿԻ ՍԵՂԱՆ

Ս. Լուսաւորիչ եկեղեցիէն ելլելով՝ դարձեալ ձախ թեւին վրայ կայ Յունաց սեղանը՝ որուն միջավայրը երկաթեայ վանդակի մը մէջ կը պարունակէ նախասանաց սիւնիկն մէկ մասը, որ գորշագոյն կրանիթեայ սիւնի մը կտոր է, և ըստ աւանդութեան, Տէրն մեր